թիւններ մատուցանելու փափաքով պաշտօնիս ձեռնարկեցի։ Ցուսալով որ այլ ևս անյաջողութեան մատնուելով վերջնականապէս հրաժարական մատուցանելու հարկին տակ չեմ գտնուիր, այս առթիւ ձեր բարձրապատուութեան կմատուցանեմ խոնարհ յարգանքներս։

Պատրիարք Հայոց Կ. Պոլսոյ ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

Նախարարաց Խորհուրդն երէկ նկատողութեան առաւ այս թադրիրը։

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Հայ կաթոլիկ Պատրիարք-Կաթուղիկոսի ընտրութեան պայքարը. Յուվարի 11-ին Հայ Հռոմէականների կաթուղիկոսական գահլիճի մէջ Տեղապահ Գոյիւնեան եպիսկոպոսի նախագահութեամբ գումարուել է ազգ. ժողովը, որ եղել է շատ աղմկալից։ Սինոդը (եպիսկոպոսների ժողովը) կամենում է Վատիկանի հրահանգի համեմատ, որ դրուած է 1867 թ. Յուլիսի 10-ին (Տես Արարատ դեկտմ. 1909թ. եր. 924—926) կատարել կաթուղիկոսի ընտրութիւնը, որի համար խմբուած են Կ. Պոլիս վիճակների եպիսկոպոսները իսկ ազգ. ժողովը կամենում է կաթուղիկոսական ընտրութեան մէջ ազգի իրաւունքները ապահովող մի կանոնագրութիւն խմբագրել ու հաստատել տալուց յետոյ ձեռնարկել կաթուղիկոսի ընտրութեանը։

Սակայն Գոյիւնեան Եպիսկոպոսը պնդելով որ Սինոդի պարտքն է միմիայն կաթուղիկոսական ընտրութիւն կատարել, բացէ ի բաց մերժում է ազգ. ժողովի առաջարկը և դրպանից հանելով մի գիր, ասում է թէ

«Հռոմէն ստացած հրահանգն է, որ կը յուսայ թէ ամէն խնդիրներուն լուծում պիտի տայ, քանի որ ամենքդ ալ պարտիք հնազանդ և հպատակ ըլլալ Պապին, ըսաւ. Այդ գիրը կստորագրէր Պոլսոյ պապական նուիրակը և կը յայտնէր, թէ պապական ժողովէն

ստացած հրահանգին համաձայն կը յանձնարարէ նախ-քան զընտրութիւն երբէք կանոնագրի քննութիւն չը կատարել, իսկ եթէ ժողովը հակառակի՝ լուծուի Սինոդը»

Այս առիթով խնդիր է ծագում, թէ ով է տեղեկութիւն տուել Հռոմին։ Գոյիւնեանը պատասխանում է, որ Սինոդի հաւանութեամբ է եղել։ Ժողովականների զայրոյթը սաստիկ է եղել Գոյիւնեանի դէմ, որ պարտաւորուել է իւր սենեակը քաշուել։ Այնուհետև ժողովը շարունակելով իւր նիստը դռնփակ՝ ընտրում է մի յանձնախումբ Սինոդի հետ խորհրդակցելու և պապական նուիրակի մօտ գնալով իւրաց վիճակը պարզելու և թիւրիմացութիւնները փարատելու։ Մասնաւոր տեղեկութիւններից յայտնի է, որ նուիրակը պատասխանել է պատգամաւորութեան, թէ Հռոմի հրամանագիրը վերջնական և անդրդուելի է։

Սակայն յետոյ ստուգուել է, որ Սինոդը որոշում չէ արել, այլ Գոյիւնեան ինքնին է դիմել Հռոմին։

Վերջին տեղեկութիւնները հաւաստիացնում են, որ Հայ-կաթոլիկ պատրիարք-կաթողիկոսի ընտրութեան առիթով ժղուած պայքարը մեղմացել է։ Ժողովրդի ներկայացուցիչների և սինոդի միջև համաձայնութիւն է կայացել հին կարգով կատարել կաթուղիկոսի ընտրութիւնը, որից յետոյ սինոդն ու ժողովրդական ներկայացուցիչները ստորագրելով կանոնագրութիւնը կառաջարկեն պատշաճ իշխանութիւններին ի հաստատութիւն և այնուհետև յանխափան գործադրութիւն ապագայում։